

**Մ10Գ<sub>2</sub>Կ տեսակի շարժիչի յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրագՋԷԿ» ԲԲԸ-ում 11.07.2023թ. ժամը 11<sup>00</sup>–ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է.Մանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ

Ե.Բաղդասարյան–ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով

Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. Մ10Գ<sub>2</sub>Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղի գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Կայանի արտադրական կարիքների և տրանսպորտի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ձեռք բերել շարժիչի յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2023թ. երրորդ եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով:

Մ10Գ<sub>2</sub>Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրագՋԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀՋ-ՊԸ-ՇՅ-13/11.07.23** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը:

Գնման առարկան	Զ/մ	Քանակ	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
Մ10Գ <sub>2</sub> Կ տեսակի շարժիչի յուղ	լիտր	410	ՀրազՁԷԿ ԲԲԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ 2. Արման-Օիլ ՄԵԿ ՍՊԸ 3. Մոսէսկո ՍՊԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ -1լ 1470դր/ԱԱՀ-ով 2. Արման-Օիլ ՄԵԿ ՍՊԸ-1լ 1860 դր/ԱԱՀ-ով 3. Մոսէսկո ՍՊԸ -1լ 1650 դր-ԱԱՀ-ով

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխան և լավագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց**.

1. ՀՁ-ՊԸ-ՇՅ-13/11.07.23 ծածկագրով Մ10Գ<sub>2</sub>Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ին:
2. Կնքել պայմանագիր «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1470 դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն, 410 լիտր շարժիչի Մ10Գ<sub>2</sub>Կ տեսակի յուղի ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Է. Սանամյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան